ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՕԳՈՍՏՈՍԻ 1881 — № 152

№ 152 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՕԳՈՍՏՈՍԻ 1881

ՄՇԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՍԱՆԵԻԶՈՐՈՐԴԱՐԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տաճ օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով խրատարները 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տոն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետոյ։

Յօդուածագրութիւնները պիտի ուղղուին խմբագրութեան հասցէով։ Въ редакцію газеты «Мегу Айастанъ», въ Тифлисъ, или Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խրատարները պիտի ուղղուին խմբագրութեան հասցէով։

Յայտարարութիւնները հաճար վճարում են ամեն մի բառին $1^1/_2$ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատունը և պ. Շահվերդեանի պռօվիզիօնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայկէն և օտար լեզուներով։

ԵՂԲԱՐՔ Կ. ԵԻ Ս. ՊՕՊՈՎՆԵՐԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ.

Գրաւոնեակը կուզնէցկի կամրջի վերայ, կ. Ս. Պօպովի տանը։

Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր Ֆիրմային **ԹԷՅԻ** առևտուրի համար բաց արինք նորերում նոր խանութներ և հետևեալ քաղաքներում։

ԽԱՐԿՈՎ ՈՒՄ—Պետրովսկի փողոցի վերայ, սեպհական տան։
ԹԻՖԼԻՋՈՒՄ—Գօլովինսկի պրօսպեկտի վերայ, Մերիմանեանցի տան։
ՍԵՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ—Բօլշոյ-Մօրսկոյ փողոցի վերայ, կօգէն վաճառականի տանը։

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները — **Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ** և **ԿԻԵՎՈՒՄ**—Թէյն, որ առած է Ֆառնաերից, կէս Ֆառնաերի և քառորդ Ֆառնաերից, ուղարկվում է մեր գլխաւոր սպահեստ խանութից, որ գտնվում է Մօսկվայում, Կրասնօսէլսկի փողոցի վերայ, սեպհական տանը։

4—30

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

23 յունիսի.

(Թղթակցութիւն «Մշոյ Հայաստանի» տպագրի)

Լրագիրք և թղթակիցք չեն դադրիր ճշմարտութեան առաւել կամ նուազ մատ տեղեկութիւններ հաղորդել «Հայկական խնդրոյն» վրայ որ եթէ ցարդ չը լուծուեցաւ, բայց և այնպէս իւր գոյութիւնը և իւր ստիպողականութիւնն ոչ ունքէ կ'ուրացուի ի բաց առեալ թըրքական մամլոյն մէկ մասէն, Մէկ մասէն ըսինք և այս ալ յառաջադիմութիւն մ'է ղոր թրքական մամուլը րրած է թէև րռնի, դի այսօր երկու ընդդիմամարդ բանակներու բաժնած, «Վաքըթ» մէկ կողմէն, «Թէրճէման Հաքիքաթ» և «Ձէրիեէի Հավատիս» միւս կողմէն, առաջինը բարենորոգմանց, իսկ վերջինը աբօղեալ հարստահարութեան և ընդհատանի բարեկարգութեանց ինքզինքնին կողմնակից ցոյց կուտան։ Այս վերջնոց աւանդական մոլեռանդութեան նոր դաղափար մը տալու համար հարկ կը համարիք հետևեալ մի քանի տողերը ընդօրինակել որք մեր ազդին ապագային համար կըրնան չատ մեծ կարեորութիւն ունենալ։ «Սէմաֆօռ» փառատարօս հայատեաց լրագիրը՝ Լօնդրայէն յունիս 31 թուով տասած մէկ հեռագրին համար կը ծա-

« նուցանէ թէ «Հայաստանի ինքնօրինու-
« թեան պաշտպանող մասնախումբն՝
« անգլիական ժողովրդեան կողմանէ
« խիստ քիչ համակրութիւն կը գտնէ»։
«Թէրճէման Հաքիքաթ» այս կարծեցեալ լրոյն կարեորութիւն տալով ինչպէս բըռնական է իրեն համար՝ հետևեալ դիտողութիւնները կը յաւելու. «Այս (հայ-
« կական) ինքնօրինութիւնը՝ Պուլղարիոյ
« մէջ տեղի ունեցած արիւնհեղութեան
« և կատորածոյ հետ չը բաղդատուելու
« չափ սոսկալի չարդերու կրնայ տեղի
« տալ, ուստի եթէ Անգլիոյ ժողովուր-
« դը խաղաղասէր է, պէտք է որ ան
« միայն խիստ քիչ համակրութիւն ցոյց
« տայ այն ինքնօրինութիւնը ձեռք
« բերելու աշխատողներուն, այլ և հա-
« րաւակային կարծեաց նողկանքն հրա-
« վիրէ նոցա վրայ»։

Մեր ստացած վերջին և ստոյգ տեղեկութեանց նայելով՝ թրքական մամլոյն սոյն սպառնալից յայտարարութեանց հակառակ՝ անգլիական դեսպան լօրդ Տիւֆըրէն՝ առաջին նախարար Սայիտ-փաշայի հետ ունեցած մէկ տեսակցութեանը մէջ բացորոշ կերպով պրուցեր է թէ մեծ ազգութիւնք 15 օր պայմանաժամ կուտան օսմանեան կառավարութեան կողմանէ պատրաստութեան մէջ եղող բարենորոգմանց ծրագրոյն ներկայացմանը, սոյն թուականը անցնելէ յետոյ դեսպանք ինքնին պիտի պատրաստեն ծրագիր մը և զայն սուլթանի կառավարութեան ներկայացնելով՝ նոցա դործադրութիւնն ևս պիտի պահանջեն. լօրդ Տիւֆըրէն աւելցուցեր է նաև որ եթէ օսմանեան կառավարութիւնը բարենորոգմանց խնդիրը երկարաձգէ, Անգլիա եւրոպական տէրութեանց հետ համաձայնութեամբ Պէռլինի դաշնագրոյն 61-րդ յօդուածի գործադրութիւնը պահանջելէ դատ, Այիպրոսի դաշնագրոյն այն յօդուածին գործադրութիւնն ևս պիտի պահանջէ որով օսմանեան տէրութիւնը կը պարտաւորի իր ասիական երկիրներուն մէջ բարենորոգումներ ի գործ դնել եթէ փոխադարձ կ'ուզէ որ ևս օսար տէրութեան մը յարձակմանը դէմ Անգլիայէն պաշտպանութիւն Անգլիոյ դեսպանին սոյն յայտարարութիւնները մեծ ազդեցութիւն ունեցած լինել

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ա զ գ ա յ ին.—Պ. Լեոն Տիգրանեանցի յօդուածի առթիւ։
Քաղաքական.—Քաղաքական տեսութիւն.— Քաղաքական լուրեր։
Մ ա ն ր լ ու ր ե ր։
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն.— Թղթակցութիւն Կ. Պօլսից։

ԱԶԳԱՅԻՆ

Պ. ՌԱՖԻԿ ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ.

Լրագրի խոհեմ ու լուրջ յօդուածը, արդարև, ընթերցող հասարակութիւնը մտաւորապէս և բարոյապէս բարձրացնում է, իսկ ընդհակառակը՝ խոհեմ դատողութիւնից զուրկ, և կրքի ազդեցութեան տակ ջղաձգ յօդուածոյ՝ նոյնն նաև

ըռլապես մոլորեցնում է ու ախտաբ հետևանքների է հասցնում, նամանաւանդ այն հասարակութեան մէջ, որտեղ լրագրութիւն կարգացողը մեծ մասամբ տարրական ուսում ստացող դասն է, այն որ մի հասասա համոզմունքի, գաղափարի տէր դեռ չի կարող վճռել։ Այս վերջին կարգ յօդուածների չարքը, տարարդարար, անցնում է և պ. Լ. Տիգրանեանցի յօդուածը Երևանից, «Մշոյ» 195 համարում։ Եթէ ուշադրութեամբ կարդանք այդ յօդուածը, որը մի ամբողջ երես է տեղ բռնել, ընթերցողը կը տեսնէ, որ պ. Լ. Տիգրանեանցը համոզուում է և հետևապէս անհրաժեշտ է գտնում լսող խալը Երևանի կանանց համար, իբր միակ եղիծ մեջտեղ հասարակական կեանքին ընտելանալուն։ Ամեն մի փոքր ի շատէ խոհեմ մտածող

գին վարպետ վանայ մէջ կ'ամբաստանուին իբրև խռովարար և անմիջապես տրահանգ կ'ստանան տեղւոյն իշխանութիւնք որ սոյն երկու անձինքը Պօլիս ղրկուին ընդ հակոդութեամբ։ Սոյն գործէն պատրուակ եղած լինել կը թուի կարսի առաջնորդ Աղվանեան Գրիգորիս եպիսկոպոսի մէկ նամակը ուղղակ առ խրիմեան որ կառավարութեան կողմանէ բռնուելով և քննուելով յիշեալ միջադէպին թեղի կուտայ։ Նամակին պարունակութիւնը մեր լսածին համեմատ հետևեալն է եղեր. «Վարսի և Նորա չրջա-
« կայից մէջ յերևան եկած ժողովրդա-
« կան յուզումը» պատճառ եղած է մի
« քանի անխորհուրդ երիտասարդաց
« խումբ կազմել և արշաւել Թուրքիոյ
« հողը չվոթութեան յարուցանելու հա-
« մար. զգուշացուցէք ձեր վիճակային-
« ները սոյա հետ մասնակցութենէ և
« անչուշտ եւս ալ զուք կարևորութիւն
« դան չէք ընծայեր այդ թեթևասոլիկ
« երիտասարդաց որք կրնան տեղւոյդ
« ժողովրդեան նոր թշուառութեան մը
« պատճառ լինել»։ Սոյն անմեղ պարունակութիւնը օսմանեան յեղին ատիճանի մը կատարած իշխանութեանց գաղափար տալով թէ իբրև թէ գաղտնի ապստամբութեան մը ծայրը յերևան ելաւ որ խըռնամբով կը պատրաստուէր ընդ մէջ երկու սահմանակից տպգակցայ, պատճառանք եղած է օսմ. իշխանութեանց բռնական միջոցներու դիմել, որոյ դէմ Ներսէս պատրիարք աղղուսակս բողոքելով՝ պահանջեր է որ Խրիմեան և Արբուանճեանց կատարելապէս անպատրաստ լինելով Կ. Պօլիս չը բերուին. խնդիրը այս վիճակին հասած է և չը գիտեմք թէ Ներսէս սրբազան պիտի յայտնի իւր պահանջը գործադրել թէ կառավարութիւնը հասկ ուրնին չ'անսալով պիտի ուզէ ևս պարագայի մէջ այդ անձին-

հետևանքները այն ընտանիքներում, ինչպէս ներկայ հոդի ընտանիքն է, որը դեռ չարաշահում է ապրիլ համարեա նահապետական կեանքով, եթէ այդ լաւ խա, դը մի առանձին կերպարանք է առնում, ինչպէս յիշում է պ. Տիգրանեանցը։ Նա յարձակվում է սարսափելի կերպով լաւ խաղի հակառակորդների դէմ, քանի որ հակալօսականների բարձր և վեհ սկըզբունքը առևի պատուի ու յարգանքի արժանի է, քան անիմաստ յիշողների. պ. Տիգրանեանցի առաջ բերած փաստերը լաւ խաղի անհրաժեշտութեան մասին լոկ ու խղճալի փրպներ են, քան թէ իրական ճշմարտութիւններ։ Նա անդադար պնդում է հասարակական կեանքի անհրաժեշտութիւնը կանանց համար, կարծես թէ մարդ—ամուսինները կատարելապէս ապրում են հասարակա-

քը հեռացնել ի վատպուրականէ որոց ներկայութիւնը կրնան միշտապէս հակակշռել իւր դաղտնի խորհրդոց իրականացումը։ Ցաւք կարծեր որ սոյն երկու յարդելի եկեղեցականաց վանէն հեռացումը կարենայ տեղի ունենալ առանց ժողովրդին մեծ յուզման և կառավարութիւնը որքան զօրաւոր լինի նաև՝ լուրջ պատճառի մը չը դոյութենէ կ'զգուշանայ հաղարաւոր մարդոց հետ կռուելու չափ զինու. զօրութեանց դիմել և անպարտ տրիւն թափել այսպիսի ժամանակի մը մէջ երբ եւրոպական տէրութեանց դեսպանք 61-րդ յօդուածի գործադրութիւնը ձեռք առնել որոշած են։ Տեղւոյս պատերազմական պաշտօնատունը մի քանի բարձրատեաններ սպայներ կ'ուզարկէ այս օրերս արևելեան-Հայաստան, պաշտօն տալով նոցա Քոթուրի Թուրք-պարսկական սահմանագըլուխը վերջնականապէս դծել։ Մեր առած տեղեկութեանց նայելով սոյն սպայները իրենց առևրեւոյթ պաշտօնէն առևլի գաղտնի կարևոր պաշտօն մը ունին տեղւոյն ժողովրդոց՝ հայոց և քըրդաց միմեանց հետ յարաբերութիւնները և իրաքանչիւրին զօրութիւնները քննել, թէ ինչ աստիճանի ատոյգ է հայոց մէջ սարսածուած յեղափոխական ոգին՝ այդ կողմերը, թէ կառավարութեան զօրութիւնք և ամրոցք կանոնաւոր վիճակի մէջ են ունէ ներքին և արտաքին յարձակմանց անմիջական դիմադրութիւն մը ընծայելու համար։ Պէտք չէ կարծել ոմանց պէս թէ այդ երկրին մէջ տիրող զօրութիւնը ստուերական և անաարբեր իշխանութիւն մ'է, ընդհակառակն կարի խոհեմանկ, կասկածոտ և բռնաւոր որ թէև տիմնական գործոն չը տաներ եղելութեանց բայց գործել ի վեր սովորութիւն գործած է իրեն համար օրը օրին որ կողմէն քամին փչէ այն ծակը

ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

XV

(Շարունակութիւն)

1) **Վ ա ր դ ա ն ի** (տկն) ա տ ա մ ա ն ի (28—57 յօդուած):

Ա ր դ ա ն ի ն ե ր ը (28—60 յօդուած):

9) **Ո ր ո ւ ա ն դ ա կ ա ն** (58—60 յօդուածներ տես վերեւը):

Ծ ո ւ ա ր թ ն ո ց (61—64 յօդուածներ տես վերեւը):

Ա ր ա ր ո ղ ա կ ա ն ք ը (65—66 յօդուածներ տես վերեւը):

Ա ր ա ր ո ղ ա կ ա ն ք ի ն (67—68 յօդուածներ տես վերեւը):

Ա ր ա ր ո ղ ա կ ա ն ք ի ն (69—70 յօդուածներ տես վերեւը):

Ա ր ա ր ո ղ ա կ ա ն ք ի ն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ՆՈՐ ՏՊԱՐԱՆՈՒՄ

Ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրայ ամենամատչելի գներով:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Պ. Մ. ԼԷՒԷԴԻՆՍԿԻ

Տեղափոխվեցաւ Օրլովկոյ տանը, ինտիտուտի մօտ:

2—5. (շ).

ԵՐԻՒՆԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԶԷՄԷՍՈՎԸ

Տեղափոխվեցաւ Արսէնևի փողոցի վերայ «Կրուժօկի» ձմեռային բնակարանի յետևի փողոցը, Գօրբունովի տանը: 2—5 (շ).

Ց. ՄԷԼԻՔ—ԲԷԳԼԱՐՈՎԻ

Մասնաւոր ռեալական ուսումնարանի մէջ (թիֆլիզ, Բարօնսկի փողոց, տ. № 10, ուր առաջ ինտէնդանտսկոն էր գտնւում) լրացուցիչ և ընդունելութեան քննութիւնները կ'սկսվին ՕԳՈՍՏՈՍԻ 20-ին, իսկ ուսումը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ին: 2—4

Վիմագրութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է առ այժմ Ադէքսանդրապոլում կարապետ Յովհաննէսեանցի աշխատասիրած 2-դ նկարը, որ պարունակում է **ԽՆԾԿՕՆԻՑ** մենաստանների հետ, **ՇԻՐԱԿԻ ՄԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՀՆՈՒԹԵԱՆՑ** տեսարանները, որոնք հրատարակուած չեն եղել տակաւին ոչ լուսանկար և ոչ էլ վիմատիպ պատկերներով: Գինն է 1 ռուբլի: Կարելի է ստանալ հետևեալ հասցէով՝

Въ гор. Александрополь, Карапету Хачатурянцу Аганджаніанцъ:

Խնդրում եմ այն ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՑ, որոնք կը ցանկան առաջիկայ սեպտեմբերից մանկավարժուհի երեխանի և կարսի վիճակներումը, բարեհաճեն յայտնել ինձ իրենց պայմանները և դասախօսութեան առարկաները: Հասցէս՝ վաղարշապատ:

Պաշտօնակատար Թեմական վերատեսչի՝

Պ. Պաօչանց,

Խնդրում եմ **ԵՐԵԻԱՆԻ և ԿԱՐՍԻ** վիճակների դպրոցական **հոգաբարձութիւն**ների առաջիկայ սեպտեմբերից հարկաւոր եղած ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ համար դիմել ինձ, յայտնելով մանրամասնօրէն իւրեանց պայմանները, վճարելիք ռոճկի քանակութիւնը, տանուտէրի տարեկայքը, գասերի որքանութիւնը և այլն:

Պաշտ. Թեմական վերատեսչի՝

Պ. Պաօչանց,

Գ ո ւ բ ս ե կ ա ն մ ա մ ո ւ լ ի տ ա ա կ ի ց

Հրատարակութեամբ Ջաք. Դրիգորեանցի «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ» և վաճառվում են.

1) Ծ ե ր ե ն ց ի «Թէոդորա Ռշտունի», գինն է . . . 1 ռ. — կ.
2) — — «Թորոս Լևոնի», երկր. տպագրութիւն . 1 ,, — ,,
3) — — «Երկունք Թ. դարու». . . . . 1 ,, — ,,
4) Գ ա մ ա ռ-Գ ա թ ի պ ա «Մանկակ. ոտանաւ. և երգեր». — ,, 20 ,,
5) «Դիւցազունք՝ Հայկ, Արամ և Վահագն» . . — ,, 30 ,,

Վաճառվում են և հետևեալ նոր հրատարակութիւնները.

1) «Սոխակ Հայաստանի», հատոր ա. գինն է. . . . 1 ռ. — կ.
2) Ր ա ֆ ֆ ի «Դաւիթ-բէկ» առաջին հատոր . . . 1 ,, 50 ,,
3) — — «Խչէնթը» . . . . . 1 ,, 20 ,,
4) Ա յ վ ա զ ե ա ն ց Գ. արքեպ. «Պատմութիւն Խալիպեան ուսումնարանի» . . . . . 2 ,, — ,,
5) «Տնային բժշկական մարմնամարզութիւն» . . . — ,, 40 ,,
6) Ֆ ի շ մ ի շ ե ա ն, «Բուսաբանութիւն համառօտ» . . . — ,, 30 ,,
7) Կ ո ստ ա ն ե ա ն ց, «Գրաբառ բայերի խոնարհումը» . . — ,, 25 ,,
8) Ա ֆ ա ն ա ս ե ա ն ց, «Երևանի նահանգի բուսաբանութ.» — ,, 50 ,,
9) Ն. Ֆ. Վ. «Խօսակցութիւն օրիորդաց մէջ» . . . — ,, 10 ,,
10) Մ օ զ ե ա տ ո վ ի «Մարդուս բարոյական զարգացումը» . — ,, 30 ,,

12—20

Յանկանալով հրատարակել «Гоголь Ума» կօմէդիայի հայերէն ՈՏԱՆԱՒՈՐՈՎ թարգմանութիւնը «ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱՍ» վերնագրած՝ դիմում եմ ընթերցասէր հայ հասարակութեան օժանդակել ինձ բաժանորդագրութեամբ տպագրութեան անցկացնելու համար: Բաժանորդագրութեան գինը իւրաքանչիւր մի օրինակի համար նշանակած եմ մի ռուբլի: Ցուսով եմ, որ մերայինք չեն զլանալ իւրեանց օժանդակութիւնը ցուցանելուց այսպիսի մի յայտնի բեմական գրուածք ունենալու համար մեր գրականութեան մէջ: Յանկացողք կարող են դիմել «Մեղու» խմբագրատան:

Կ. Տէր-Ասատուրեան.

Գրիգոր Տէր-Մկրտչեանց «ԱՇԽԱՏԱՆՔ» լրագրի խմբագիր, ունի յանկութիւն առաջիկայ սեպտեմբերից դնել հայ գաւառ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ կամ ՏԵՂԱԿԱՆ պաշտօնով: Յանկացող ուսումնական վարչութիւնք թող բարեհաճին վաղօրօք յայտնել իրանց յանկութիւնը այն հասցէով. Въ Тифлисъ, въ редакцію газеты „Трудъ,“ караванъ-сарай Тамамшева, 5-ый этажъ, № 15:

Յառաջիկայ ուսումնական տարուայ համար **ԵՐԵԻԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ** հարկաւոր են **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ** Հայոց, Գաղիերէն լեզուների, գծագրութեան, տոմարագիտութեան, Ռուսաց վարչաշրջութեան, Ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան համար. և մի ուսուցիչ տպայոց ծխական դպրոցի: Ամեն մի ուսուցիչ պարտաւոր է ունենալ շաբաթական 24 դաս: Յանկացողները թող բարեհաճին իւրեանց պայմանները և ուսման վկայականները առաջարկել նոյն դպրաց նոցի վարչութեանը:

Անդամ Հոգաբարձութեան՝

Վ. Բրդեան Եղիազարեանց

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ»:

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թիֆլիզի բոլոր գրավաճառների մօտ «Պօբինզօն ի պատուհասը», թարգմանութիւն Գիւտ քահանայի Աղանեանց. գինն է 60 կոպէկ:

—

Արդէն Մօսկվայում դուրս եկաւ մամուլի տակից նոյն ընկերութեան հրատարակութեամբ և ստացուեցաւ ԳԱՄԱՌ - ՓԱՓԻՊԱՑԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎԱՆՈՒՆ հեղինակի պատկերով:

Գինը լինելու է 50 կոպէկ:

Նոյն փառակում 1 ռ. 20 կոպ:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձութիւնը յայտնելով V և VI **ԴԱՍԱՏԱՆՑ** նախկին ուսումնարան **ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ**, թէ առաջիկայ սեպտեմբերից բացվում է VII դասատունը ուսուցչութեամբ մանկավարժ պ. ԱՌԱՔԵԼԻ ԲԱՀԱՔՐԵԱՆՑ, հրաւիրում է նոցանից յանկացողներին առանց հարցաքննութեան մտնելու VII-դ ասատունը ուսանելու, ուր ուսման ընթացքը աւարտողը կ'ընտանայ մրցանագիր:

Յանկացողները իրանց յօժարութիւնը կարող են յայտնել մինչև առաջիկայ օգոստոսի 25-ն պ. տեսչին դպրանոցիս գրասէր կամ բերանացի:

Հոգաբարձու Դ. Ղորղանեանց.

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ» անցեալ տարուայ անդամները և յանկացողները անդամ դառնալու կարող են դիմել ընկերութեան գանձապահ պ. Մովսէս Թաւադեանին, թիֆլիսի առևտրական բանկա անդամակցական վճարը հատուցանելու և տոմսակ առնելու:

Ա Զ Գ

«Միացեալ ընկերութեանց» տեսչութեան յանձնուած **ԿՈՒԱՅ Ս. ԴԱՆԻԷԼ Վ. ԱՆԳԻ** պարզացմանն համար մի յատկով 10 թիմուռ կոպէկ և մի արտօնով 6 ուսանողական ձիեր հարկաւոր լինելով, ընկերութեան նիւթական վիճակի անձկութեանը պատճառաւ՝ Կեդրոնական Ժողովը իր վերջին նստին մէջ ցնօրէն ժողովոյ յանձնարարից ազգայնոց առատաձեռնութեանը դիմել, յիշեալ անասուններըը ամբողջապէս կամ մասամբ հայաստանի տեսակցական վիճակի բարւոքմանը նպաստող այս ձեռնարկը երկրին հողագործական անասնոց տեսակն ազնուացնելու օգուտն ևս ունենալով, ցնօրէն ժողովը կը յուսայ թէ ընկերութեան հրաւէրն անընդունելի չը պիտի մնայ:

Ի դիմաց «Միացեալ ընկերութեանց» ցնօրէն ժողովոյ՝
Ա տ ե ն ա գ պ իր Ա տ ե ն ա պ ե տ

ԱՐՇԱԿՈՒՆԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՉԵՐԱԶ

2—5

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ վարչութիւններին մինչև առաջիկայ օգոստոսի 1-ը հաղորդել ինձ, եթէ ունին որ և իցէ առարկայից ուսուցչի կարօտութիւն. իսկ այն անձանց, որոնք ցանկանում են ծառայել յիշեալ ուսումնարաններում հրաւիրում եմ վաղօրօք յայտնել ինձ իրանց ցանկութիւնը բերանացի կամ գրաւոր:

Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց,

Դուրս եկաւ մամուլի տակից **«ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»** ազգային լրակատար երգարանի Առաջին հատորը երկրորդ տպագրութեամբ, փոփոխած, որի մէջ գտնվում են բացի այն բոլոր երգերից, որոնք յայտնի են ժողովրդին, նոյնպէս նոր երգեր, հայրենիք բաժանութիւններ և արձակ գրուածներ: վաճառվում է Թիֆլիս «կենդրոնական» և «հովկասեան» գրավաճառանոցներում, Երեւան՝ պ. Աբգար Գուլամիրեանցի խանութում, Բագու՝ պ. պ. Գրիգոր Դիլբարեանցի և Ս. Տէր-Օհանեանցի խանութներում: Օտարաքաղաքացիները կարող են գտնել Բագու նոյնպէս «ՍՈԽԱԿԻ» խմբագիր-հրատարակչին այս հասցէով. Аваку Лазаревичу Григоріянцу, въ Баку. Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլի:

Ա—ե Գրիգորեանց.

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ԴՕԿՏՕՐ Ի. Ա. ՎԱԼՏԵՐ

Որ մեծ իշխան զօրքերի հրամանատարի կարպատրութեամբ նշանակված էր Դանայի վրայ գործող զօրքերի առաջնային հիւանդութիւնների խորհրդատու և երկու պատուաւոր դիպուածներ է ստացել, հատուկ թիֆլիզ և ընդունում եմ հիւանդներին արհեստական ատամներ դնելու համար առանց բրուժիններին, որոնց անյարմար եմ գտնում, որովհետև նրանք խանգարում են կերակրի ծամելուն: Իմ գործ ածած ձևը մինչև այժմ ատամնաբոյժեր Ռուսաստանի քաղաքներին միայն Ս. Պետերբուրգի և Մոսկվայի մէջ են գործ ածել: Իսկ գաւառական քաղաքներում նոցա չկայ նի չէ: Խորհուրդ չեմ տալիս կիսով ատամներ գործ դնել, որովհետև կիսորը փոքր առ փոքր կարում են ատամները և այդ իրողութիւնը երևի նկատել են արհեստական ատամներ գործ ածողները: Խորհուրդ եմ տալիս ատամները չը հանել, որովհետև մի ատամի հանելը միւսների վրայ վատ ազդեցութիւն է գործում: Ուրիշին պէտք է լաւ համարել ատամները լցնել ոսկով, էմալով և այլն: Նոր հնարած միջոց ունիմ որ պահպանում է ատամները փչանալուց և ցաւից, հատուկութիւն է գտել բժշկական ընկերութիւնից նոր հնարած արհեստական ատամների և ատամները լցնելու ձևերը կարելի է տեսնել իմ գրասենեակի մէջ:

Ընդունում եմ հիւանդներին առաւօտեան 10 ժամից մինչև 6 ժ.: Բնակարանս գտնվում է Շիօծվի շենութիւնում, որտեղ է գտնվում Վասիլի Փետրովիչեան, Միքրօսկի տան մէջ, որտեղ էր պատկերների վաճառատան, մուտքն է Գօլովինսկի պրօսպէկտից: 5—5

ՀԱՅՈՑԼԵԶՈՒԻ

ՈՒՍՈՒՑԻՉ

Ա. ՆՈՒՆՈՎ

ՄԵՐ ԵՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ գ ա ս ա գ ի ր ք ը լոյս տեսաւ և ծախվում է կովկասեան ու կենդրոնական գրավաճառանոցներում:

Գինն է 40 կոպ.:

Իսկ ո՛վ ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով և ձ՛ան պարհածախսը իր վերայ առնելով՝ թո՛ղ դիմէ մեզ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ.—На Авлабарѣ. Ивану Петровичу Назарянцъ.“

Շուտով լոյս կը տեսնի նմա **ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ** գասագիրքը:

Ե. Նազարեանց.
6—25

ՁԵՆ ՀԱՅՑՐԱՑ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4 յունիսի.

Ստեփանովին, Հէյկէրմանին, Զուբար Գէվանդովին, Իւլիա Նիկօլայեւնա Սոխրաչվիլային, Միչային Պետերբուրգից, կապիտան Կօրնիլովին, Եկատերինէին Վլադիկավկազից, մայօր Ենիկոլօպովին, Արաքելովին:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 4-го Августа 1881 г. Типографія М. Ротинянцъ и К. Տուն բժշկապետ Մ. Ռոտինեանց.